

ՆԱԳՈՒԼԵՈՆ ԲՈՆԱԿԱՐՏԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Ա.Հ.ԲԱԽՉԻՆՅԱՆ

Տակավին Նապոլեոն Բոնապարտի (1769 - 1821) կենդանության օրոք նրա անձը և գործն առավել կամ պակաս չափով հիշատակվել են Հայոց ժամանակագրություններում, մեմուարային գրականության մեջ, մամուլում, հետազայում՝ նաև՝ գեղարվեստական ու թարգմանական գրականության մեջ:

Նապոլեոնյան իրականությանն առնչվող առաջին Հայ գրական ստեղծագործությունը կարելի է համարել Տեր Հարություն անունով մի եկեղեցականի 1798թ. հետո գրած «Ժամանակագրությունը», որտեղ 1798թ. գարնանը Երուսաղեմ իր ուխտագնացությանն առնչվող դրվագում հեղինակը նկարագրել է տեղի քրիստոնյա համայնքի կացության վրա Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի ծանր հետևանքները: Ենթադրում ենք, որ Տեր Հարությունն այնտեղ հիշատակած կարող է լինել Նապոլեոնի անունը: Եթե այդպես է, ապա մաշտոցյան տառերով Նապոլեոնի անունն առաջին անգամ գրվել է արդեն XVIII Հարյուրամյակի վերջին:

Երուսաղեմի Հայոց Պետրոս պատրիարքը նույն 1798թ. նոյեմբերի 11-ին Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին գրած նամակում հայտնել է Նապոլեոնյան ներխուժման մասին. «...ազգն գաղղիացուց մեծահանդես նաուք բազմութեան յանկարծուստ իմն զԱղէքսանդր ծովեզր քաղաքն պաշարեալ, յորմէ զոտս իւր յԵգիպտոս խաղաղուցեալ զմարդիս սրոյ ճարակ տալով խուռն ամբոխիւք իբր անհամար թուով ի փոքր միջոցի զայն ինքեան իսկապէս գրաւելով զկնի, շուրջ ղնովաւ եղեալ գաւառսն սարսեալ զողացոյց, ահ երկիւղի անողորմութեան նորին»: Այս տվյալը կարելի է համարել Նապոլեոնյան իրականության առաջին ստույգ հիշատակությունը Հայ մատենագրության մեջ:

Հաջորդ տվյալը, նույնպես ոչ անմիջական, առնչվում է Հովսեփ արքեպիսկոպոս Արղունյանին. վերջինս 1799-ի մայիսի 15-ին Պետրբուրգից («ի Պետրպօլք») տեղ Ստեփանին գրած նամակում հիշել է, որ «Գրաֆ Սուվորովն զՔրանկսիզս յոյժ խորտակէ. Տէր մանրեացէ գնոսա»: Խոսքը վերաբերում է Սուվորովի՝ Հյուսիսային Իտալիայում Նապոլեոնի բանակներին պարտության մատնելու իրողությանը:

Հայոց եկեղեցու մեկ այլ առաջնորդ՝ Դանիել Ա. կաթողիկոսը, 1808թ. նամակ է հղել Նապոլեոնին՝ նրան անվանելով «Մեծ Նապօլէօն խաչապսակ ինքնակալ կայսր Փրանցայու»։ Հաջորդ՝ 1809թ., էջմիածնից երկրորդ նամակն է հղվել Բոնապարտին²:

¹ Պ. Ա. Զոբանյան, Հայաստանի պատմության նորահայտ «Ժամանակագրությունը» («Պատմա-բանասիրական հանդես», 1997, № 1, էջ 241):

² Նույն տեղում, էջ 241 - 242:

³ Գյուտ Ա. քահ. Աղանյանց, Դիվան Հայոց պատմության, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 273:

⁴ Լուսա, 1897, Տիֆլիս, գիրք Ա, էջ 295 - 297, 303 - 305:

Հայ գեղարվեստական գրականության մեջ Բոնապարտը հիշվել է XIX դ. սկզբին: Տակավին 1804 թ. Տրիեստում բնակվող Հայ հոգևորական Պետրոս Յուսկուտարյանը գրել է հետևյալ քառյակը.

Տիրես գաւառաց՝ տիրես աշխարհի,
Դու նաբուլսոն՝ կայսրըդ ինքնընտիր.
Բայց կայ մի Աստուած՝ դիր դու ի մըտի,
Զամենադենիդ՝ տեսանօղ զոնիր՝:

Այս բանաստեղծությունը լույս չի տեսել և պահվում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանում (թղթապանակ 3ա): Այն արտահայտում է ժամանակի եվրոպական հասարակության վերաբերմունքը Նապոլեոնի՝ որպես նվաճողի և քաղաքական աճապարարի հանդեպ: Հայ կրոնավորը հիշեցնում է, որ Աստծո աչքից չեն վրիպում աշխարհակալ ինքնընտիր կայսեր գործած ոճիրները:

Վենետիկի «Դիտակ Բյուզանդյան» պարբերաթերթի 1812 - 1815 թթ. տպագրվող լուրերում հաճախ է հանդիպում Ֆրանսիայի կայսեր անունը՝ Նաբոլեօն, Պօնափաուլթ, Փօնափաուլթ և այլ տառադարձություններով: Թերթի հրատարակիչը՝ Մխիթարյան միաբանության անդամ Գրիգոր վարդապետ ինապարաճյանն իր կարծիքը չէր հայտնում պատերազմական իրադարձությունների և Նապոլեոնի մասին, այլ նյութերը նույնությամբ թարգմանաբար տալիս էր փարիզյան լրագրերից: Քանի որ Վենետիկը գտնվում էր Նապոլեոնի իշխանության ներքո, «Դիտակ Բյուզանդյանը» նախապես թարգմանաբար հրատարակել է Նապոլեոնին գովաբանող հոդվածներ, սակայն 1813-ից, երբ Բոնապարտի իշխանությունը սկսել է փոխվել, պարբերականը սկսել է ինֆորմացիա քաղել ուրիշ աղբյուրներից, Ֆրանսիայի կայսերն անվանելով բռնավոր և աշխարհի թշնամի:

Իսկ երբ է հայերենով լույս տեսել առաջին գեղարվեստական գործը Նապոլեոնի մասին: Դարձյալ «Դիտակ Բյուզանդյանը» 1815 թ. թարգմանաբար Նյուրնբերգի թերթերից մեկից (որ անվանել է «Նօռմալեոկին կազէթան») արտատպել է մի երգիծական քերթված, որ վերաբերում է Նապոլեոնյան զոհերին 1802 թվականից ի վեր: «Ասոր համար շատ աղեկ գրեց նոր բանաստեղծներն մեկը՝ տապանագիր մը նեմցեյերեն ու ֆռանսրգերեն՝ Նապոլեոնին վրա ասանկ.

«Մի արտասուէր՝ ո՞ր ուղևոր,
ընդ իմ օրհաս աղէտաւոր.
Թե կենդանի՝ այսօր էի,
չէիր արդեօք դու կենդանի»⁵:

Նույն 1815 թ. Նապոլեոն Բոնապարտը երկրորդ անգամ է երևում բուն Հայ գրականության մեջ, սակայն առանց անվան հիշատակության: Հայ կլասիցիզմի ականավոր ներկայացուցիչ Արսեն Բագրատունու՝ 1815 թ. բեմադրված «Երվանդ Բ» դրամատիկական երկում ընթերցողին հորդորելով դասեր քաղել հին և ոչ վաղ անցյալի իրադարձություններից, հեղինակը նշել է.

⁵ Ցուցակ Հայերէն ձեռագրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա, հ. Գ, կազմեց հ.Օ ք. վրդ. Մեքուլյան, Վիեննա, 1983, էջ 998:

⁶ Դիտակ Բյուզանդյան, 23.- 31. 1. 1815, էջ 29:

Որք ոչ ուսանին յանցից եղելոց
Ուսցին թող յեկա ի տիպար յետնոց...

Բռնակալ Համարվող Նապոլեոնն այդ ժամանակ արգելափակված էր մնում էլքա կղզում: Հայ բանաստեղծն էլքա կղզում գտնվող մարդու օրինակով անցյալի եղելություններից դաս չքաղողներին կոչ էր անում սովորել անցյալից, քանի որ բռնակալներն ի վերջո պատժվում են⁷:

Ժամանակի հայ գործիչներն իրենց ուղեգրություններում ու նամակներում նույնպես Նապոլեոնին որակել են բռնակալ: Սերովբե Կարնեցին 1812-ին գրած իր ուղեգրական նոթերում նրան անվանել է «բուսանդակ աշխարհի նեղիչ և Եվրոպայի բռնակալ»⁸, Բեսարաբիայի Հայոց թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը 1812 - 1813թթ. Ամենայն Հայոց կաթողիկոսին հղած նամակներում տվյալներ է հաղորդել Նապոլեոնի պարտությունից փերաբերյալ, նրան անվանելով բռնավոր: Մատենադարանի կաթողիկոսական ֆոնդում պահվում են 1812 - 1813թթ. էջմիածնին հղված մի շարք նամակներ, որոնցում հեղինակները, գրելով Ռուսաստանի վրա Նապոլեոնի կատարած արշավանքի մասին, ամենուրեք անսթուգ ատելություններ են խոսում Բոնապարտի մասին⁹:

Նապոլեոնի ժամանակակից և հետագայի մի շարք հայ մտավորականներ, շարադրելով Ֆրանսիայի վերջին տասնամյակների պատմությունը, բնականաբար բազմիցս գրել են մեծ կորսիկացու մասին: Վիեննայի մատենադարանում պահվում է 1831-ին Ռումինիայի Սուլթան քաղաքում Պողոս վարդապետ Հովնանյանի կազմած «Պատմություն Ֆրանսիայի» աշխատությունը (ձեռագիր № 1466): Այն ընդգրկում է «Գաղղիայի պատմությունն մէկ մասը՝ 1774 - 1815 - 1830», որի մի գլխի խորագիրն է «Պոնաբալթէ Նափօլէօն»¹⁰: Նույն մատենադարանում պահվող № 2088 ձեռագիրը ևս պատմագիտական աշխատություն է՝ «Բանք վասն ուսմանց եւ ազգային ինչ իրաց (1838 - 1850)», որի գլուխներից մեկը (թուղթ 80ա) վերնագրված է «Պատմութիւն նոր ժամանակի, կամ վերջին ամաց, յանկանելոյ Նապոլէոնի մինչեւ ցմեր ժամանակս»¹¹: Նույն մատենադարանի № 2217 ձեռագիր հավաքածուում, որ գրվել է 1825թ. հետո, տեղ է գտել նաև «Թուրք Պոնափալթէի առ Եգիպտացիս» գրությունը՝ «Սպարապետ մեծն Պոնափալթէ հրամանատար զօրաց Գաղղիացւոց յայտ առնէ ամենայն Եգիպտացւոց» սկսվածքով: Այն 1798թ. Ալեքսանդրիայում Նապոլեոնի արձակած հրովարտակի գրաբար թարգմանությունն է, ինչը վկայում է նրա վերջաբանը. «Գրեցաւ ի բանակին Գաղղիացիոց յԱլեքսանդրիա ժԳ. յաւուր

⁷ Վահրամ Թերզիբաշյան. Հայ նոր դրականության պատմություն, Հ. 1. Ե., 1962, էջ 138 - 139:

⁸ Սերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդադից էջմիածին, 1812թ., Ե., 1968, էջ 28:

⁹ М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. I, Е., 1956, с. 157.

¹⁰ Ցուցակ Հայերէն ձեռագրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա, Հ. Գ, էջ 219:

¹¹ Նույն տեղում, էջ 708:

ամսեանն Մեսիթօուի յամին վեցերորդի Հասարակապետութեան: Ըստ մերս 1798 իբր յՕգոստոս»¹²:

«Արշալույս Արարայտյան»-ը 1842թ. հրատարակել է «Համառոտ պատմութիւն Նապոլեոն Բոնապարտի» աշխատութիւնը (№ 75 - 87): Արդեն 1847-ին առանձին գրքով Հովհաննէս Հիսարյանի «Նաբոլեոնի վարքն» է լույս տեսել¹³: Վենետիկում 1849թ. տպագրվել է պատմաբան Աբրահամ Զարյանի «Պատմութիւն Գաղղիացւոց» երկհատոր աշխատութիւնը, որն ընդգրկում է Յորանսիայի պատմութիւնը սկզբնական ժամանակներից մինչև Նապոլեոն Ա-ի անկումը: Բոնապարտի անձը և գործը հիշված են Ամբրոսիոս Գալֆայանի «Պատմութիւն Հին և նոր աղգաց» աշխատութեան Հինգերորդ հատորում (1851), որտեղ ընդգրկված է Յորանսիայի պատմութիւնը 1789թ. հեղափոխութիւնից մինչև 1852թ. երկրորդ կայսրութիւնն ընկած ժամանակահատվածը: Հովսեփ Վարդանյանի «Նապոլեոն Բոնապարտի պատմութիւնը» Հայատառ թուրքերեն աշխատութիւնը լույս է տեսել 1855 - 1856թթ., մանրամասն և ուշագրավ դրվագներով, Փրանսիացի և անգլիացի հեղինակների լայն օգտագործմամբ: Այն տպագրվել է չորս մեծադիր հատորով¹⁴:

1859-ին Ստեփան Ռսկանդան իր «Իշխան Նաբոլեոն» հոբելանսական ընթերցողների փախազի համեմատող ներկայացրել է Նապոլեոն Գ-ի կյանքը և տոհմի պատմութիւնը¹⁵: 1869-ին «Բազմավեպը» հրատարակել է մի հոգևած Բոնապարտի մասին, որտեղ նա համեմատվել է Ալեքսանդր Մակեդոնացու և Հուլիոս Կեսարի հետ¹⁶:

Խաչատուր Աբովյանի թղթերում կա «Աղէքսանդր կայսր ի Փարիզ և անկումն Նապոլեոնի կամ անհանգուցատիպ զծագրութիւնք մեծութեան, արդարադատութեան և բարութեան արքային Ռուսաց՝ պարգևողին աշխարհի գիտադպրութիւն» («Աղէքսանդր կայսր ի Փարիզի») խորագրով պատառիկը: Այն սկզբնապես համարվել է Աբովյանի դորպատյան տարիների արգասիք¹⁷, սակայն իրականում 1814-ին Մոսկվայում լույս տեսած ռուսերեն համանուն գրքուկի առաջին բաժնի թարգմանութիւնն է: Ըստ աբովյանագետ Պիոն Հակոբյանի՝ դորպատյան տարիներին Աբովյանի վերաբերմունքը Նապոլեոնի հանդեպ միանգամայն այլ է եղել: Արդեն 1831թ. կեսին Նապոլեոնին նա գնահատել է որպես խոշոր պետական գործչի՝ արժանահիշատակ խոսքերով և գործերով: Աբովյանը թարգմանել է Նապոլեոնի ասույթներից¹⁸, իսկ ուսուցչապետ Յորիդենգերի հետ հաճախ է զրուցել «վասն ազգի անցից յԵւրոպայ, Անգլիայ, Յորանցիայ, Նապալեոն» և

¹² Նույն տեղում, էջ 816 - 817:

¹³ Այս գրքի գրախոսականը տե՛ս «Հայաստան», Կ. Պոլիս, 27. XII. 1847:

¹⁴ Հ. Վարդանյանի սույն աշխատութեան մասին մանրամասն տե՛ս Ժիրայր Դանիելյան, Բանասիրական որոնումներ, Պեյրութ, 1996, էջ 169 - 175:

¹⁵ Ստեփան Ռսկանյան, Իշխան Նաբոլեոն («Արևմուտք», Փարիզ, 1859, № 5, էջ 36 - 38):

¹⁶ Նապոլեոն Պոնաբարդ բաղդատեալ Հին և նոր դարուց երևելի աշխարհակալաց հետ («Բազմավեպ», 1869, էջ 172 - 177):

¹⁷ Խաչատուր Աբովյան, Երկերի ժողովածու, Հ. Ե., Ե., 1950, էջ 415:

¹⁸ Պիոն Հակոբյան, Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը (1809 - 1836), Ե., 1967, էջ 311:

այդ մասին նշել իր օրագրություններում¹⁹: Բացի այդ, Հայտնի է, որ Արուսյանը ռուսերենից սկսել է թարգմանել «Կայսր Ալեքսանդր Ա-ն Փարիզում և Նապոլեոնի անկումը» (Մոսկվա, 1814) գիրքը, սակայն առաջին յոթ էջից հետո դադարեցրել է աշխատանքը²⁰:

Առավել ուշագրավ է, որ Արուսյանը Նապոլեոնի անունը տվել է «Վերք Հայաստանի» վեպում: Երևանի գրավումը նկարագրելիս գրելով, որ Հայերը պետք է սրբորեն հիշեն կոմս Պասկևիչի անունը, նա այդ առթիվ նշել է մի քանի ազատաբեր նվաճողների. «Կամիլլոս Ղորղ ա՛ չոլվա՛ ազատեց, Սցիպիոն Հոմմայեցվոց թուրք Աֆրիկումը ցցեց, Կեսար Գալլիա ու Բրիտանիա ոտի տակն առավ, Նապալիոն Իտալիո, Ապանիո և Եգիպտոսին ազատություն էր խոստանում. բայց ե՞րբ Հոմմայեցիք, Գալլիացիք, Եգիպտացիք է՛ն սրտովը, է՛ն սիրովը, իրենց ազատողներին կրնդունեն, կպաշտեն, ինչպես Հայք»²¹:

Միջայել Նալբանդյանն իր «Հիշատակարանում» Նապոլեոնին բնորոշել է ոչ այլ կերպ, քան «պոլիտիկական մեծ ավազակ»: Գրելով Վերսայլի մասին, նա նշել է, որ «Ամեն մի սենյակ, ամեն մի հիշատակարան վարժեցնում էր իմ մտքի մեջ ֆրանսական մրրկալից պատմությունը. սկսած Լուդովիկոս Տասնչորսերորդից մինչև պոլիտիկական մեծ ավազակը»²²:

Նապոլեոնի անունը հիշել է նաև Ռափայել Պատկանյանն իր մանկական քերթվածներից մեկում:

Նապոլեոնի մասին հիշատակություն և խորհրդածություններ կան Սրբուհի Տյուսաբի «Մայտա» վեպում: Հերոսուհին դիպվածով ընկնում է ֆրանսիացի մի կոմսի տուն, որը պատմում է իր տոհմի պատմությունը, որի մեծ Հայրը աստվածություն է նկատել կայսերը, իսկ ինքը մասնակցել է «Օսթրեիցի և Իենայի» նշանավոր ճակատամարտերին: Կոմսն իրավամբ գտնում է, որ Մայտան գուցե իր չափ ծանոթ է վերջին Հարյուր տարվա պատմությանը, քանի որ Յրանսիայի պատմությունը բոլոր ազգերի պատմությունն է նաև: Ուշագրավ է նաև նրա այն միտքը, որ «Նապոլեոն թեև սխալմունքներ ըրավ, այդուհանդերձ մեծ պիտի մնա, և դարն՝ որ ծնունդ տվավ անոր, իրավամբ պիտի փառավորվի: Նապոլեոն յուր Հաջողությունն ու բարձրությունը կը պարտի հեղափոխության, յուր Հանճարուն, անխոնջ աշխատության, կորովամտության և դեպքերուն: Իսկ յուր սխալմունքն ծնունդ են մարդկային բնության, փառամոլությանը՝ զոր Հաջողությունն իբրև հրեշ մ'աճեցուց... Կը զարմանամ Նապոլեոնի վրա, կը սիրեմ հասարակապետություն. երկու անդամ արյան և անիշխանության մեջեն ելավ այն, և երկու անգամ երկու Նապոլեոններ փճացավ Մեծեն և Փոքրեն, որք իրենց երկաթյա ձեռամբ խեղդեցին մտաց և դորձաց ազատությունը»:

¹⁹ Նույն տեղում, էջ 442:

²⁰ Պիոն Հակոբյան, Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները, էջմիածին, 1997, էջ 424 - 425:

²¹ Խաչատուր Աբովյան, Վերք Հայաստանի, Ե., 1959, էջ 200:

²² Միջայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Հ. Ա. Ե., 1945, էջ 423:

²³ Մանկական ոտանավորներ և երգեր, խմբագրեց Գամառ Քաթիպա, Տիֆլիս, 1881, էջ 27:

²⁴ Սրբուհի Տյուսաբ, Երկեր, Ե., 1959, էջ 79 - 82:

1900թ. Խրիմյան Հայրիկն էջմիածնում գրել է «Թագավորաց ժողով» չափածո ստեղծագործությունը, որտեղ հիշել է Նապոլեոնի անունը:

Մեծ Նապոլեոն, այն գոռ վիշապ,
 Ֆշաց մրցեց ընդ Լևիաթան,
 Որ յուր գորեղ պոչով ուրեց
 Տարավ փակեց Հեղինե կղզին:
 Մեծ Նապոլեոն մտաբերեց
 Մինչ Մոսկվա արշավել,
 Վտանգեցավ, ստրջացավ,
 Միջակոտոր դարձավ հետս:
 Էն վալիդի գերեզմանին
 Եթե լսե, թե Գաղղիա
 Դաշնակից է Ռուսիո
 Հին ոսոխին և թշնամվուն,
 Խոռվին անշուշտ ոսկերոտիք...²⁵:

Դերենիկ Դեմիրճյանը Լոզանում հավանաբար 1908թ. գրել է «Նապոլեոն» ընդարձակ բանաստեղծությունը²⁶: Հայտնի է նաև, որ նա մեծ գործչի անվամբ է կնքել իր դրամատիկական հերոսներից Նապոլեոն Կորկոտյանին:

Նապոլեոնի վերաբերյալ երկերով հարուստ է նաև Հայ թարգմանական գրականությունը: Երևանի Գրականության և արվեստի թանգարանում պահպանվող պատմաբանասիրական նյութերի հավաքածուում է գտնվում անհայտ հեղինակի՝ «Ճառ մեծին Նապոլեոնի ընդդեմ նյութապաշտից» երկը: Թիֆլիսում 1858-ին լույս տեսած Մովսես Զոհրապյան Արցախեցու կազմած «Վեպք զվարճալի անցից, որում պարունակին խրատական և իմաստալից սոսացվածք» ինքնուրույն և թարգմանական գործերի ժողովածուում ընդգրկված 271 մանրապատումների թվում պատմության այլևայլ երևելիների հետ մեկտեղ ներկայացվել է նաև Նապոլեոնը²⁷: «Կովկաս» թերթում 1847թ. Վահան Ասկերյանցի թարգմանությամբ լույս են տեսել գերմաներենից թարգմանված երկու քերթված, որոնցից «Լինուրոքը» նվիրված է Նապոլեոնի երկու հավատարիմ զինվորներին, որոնք ազատվում են գերմանական գերությունից²⁸: «Բազմավեպում» 1850-ին լույս է տեսել Պիեռ Բերանտեի «Հինգ մայիս 1821» քերթվածը՝ նվիրված Նապոլեոնի մահվանը²⁹: Կ.Պոլսում 1865-ին առանձին գրքով տպագրվել է Պոդեոն ասպետի «Նապոլեոն Ա-ի մտածմունքները»³⁰: Թիֆլիսի «Տարազը» 1912-ին Մոսկվայի հրդեհի հարյուրամյա հոբելյանի առթիվ տպագրել է Նապոլեոնի շուրթերից հնչող «Մոսկվայի հրդեհը» ռուս ժողովրդական երգը³¹:

²⁵ The Meeting of the kings by Khrimean Hairik, Armeniain text and English version by P.Tonapetean and L.Biryon, London, 1915, p. 33, 36.

²⁶ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու հ. 1, Ե., 1976, էջ 56 - 57:

²⁷ Սուրեն Շտիկյան, Հայ նոր գրականության ժամանակագրություն (1851 - 1865), Ե., 1983, էջ 237:

²⁸ Մարգո Մխիթարյան, Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը XIXդ. առաջին կեսին, Ե., 1994, էջ 186 - 187:

²⁹ Պետրոս Պեռանտե, Հինգ մայիս՝ 1821 («Բազմավեպ», 1850, № Ը, էջ 150):

³⁰ Պոդեոն, Նաբոլեոնի Մեծի մտածությունը քրիստոնեության վրա, Կ.Պոլիս, 1865:

³¹ Տարազ, Տիֆլիս, 1912, № 8 - 9, էջ 151:

«Բազմավեպի» 1921-ի մի ամբողջ համար նվիրված է եղել Նապոլեոնին, որտեղ էլ թիվս մի շարք հոդվածների լույս են տեսել նաև Բոնապարտին նվիրված բանաստեղծություններ (Ալեքսանդր Սանձոնի, «Հինգ մայիս», Պուշկին, «Բոնապարտն ու սև երկնցիք», Արսեն-Երկաթի «Արծիվը»), ինչպես նաև «Կրոնական ներշնչմունք Նաբոլեոնի»՝ բոնապարտյան մտքերի ծաղկաքաղը՝ Գ.Սիրունյանի թարգմանությամբ: «Լուսնայում» լույս տեսած մեծ մարդկանց մտքերի շարքում կան նաև Նապոլեոնյան ասուլիսներ³²: Մեր օրերում էլ երևանյան թերթերից մեկը քաղվածքներ է ներկայացրել Նապոլեոնի «Սուրբ Հեղինեի հիշատակարանից»³³:

Նոր չըջանի գործերից կարող ենք հիշել Լոխմանովի «Նապոլեոնի մահը» լեռաման (թարգմանիչ՝ Դավիթ Գուլապյան, Թիֆլիս, 1914), «Նապոլեոնի լեհացի կինը» (Թիֆլիս, 1916, թարգմանիչ՝ Ս.Ն.), Արթուր Բենեթի «Նապոլեոնի ընտանեկան գաղտնիքները» (Հրատարակված՝ Կահիրեում), Նապոլեոնյան թեմայով դրված Աննաուի Սելինքոյի «Տեղեր» վեպը (որպես թերթի տպագրվել է 1956թ. Ստամբուլի «Մարմարայում»), Լամարթինի «Նապոլեոն» բանաստեղծությունը («Պալլաս», Ուոթերթաուն, 1960, էջ 279 - 281), «Հրեան և Նապոլեոնը» պատմվածքը («Նոր Մարմարա», 15. 1. 1980) և այլն: Սփյուռված առանձին գրքով լույս է տեսել նաև Ֆրանսիացի հեղինակ Կյոդ Բերթեի Հանրամատչելի գիրքը Նապոլեոնի մասին³⁴:

Նապոլեոնյան թեմայից անմասն չի մնացել նաև Հայ թատրոնը: Կ.Պոլսում 1846-ին կազմակերպված Արամյան թատրոնը հաջորդ տարի ներկայացրել է «միմական պատկերներ»՝ «Պատմություն Նապոլեոնի, Ալեքսանդրի Մեծի կամ թագաւորացն Հայոց» թեմաներով³⁵: Հայ բեմում ներկայացվել են նաև «Նապոլեոն Բոնապարտ», «Նապոլեոնի ուրախ օրը», «Նապոլեոն», «Նապոլեոնի մահը» պիեսները, վերջինում Ֆրանսիայի կայսեր դերը կատարել է Սիմոնյու: Նա հավանաբար լավ է իմացել Նապոլեոնին: Այդ է վկայում նրա «Մեր քննադատները» հոդվածում ասված հետևյալ միտքը. «Ինչպես ասել է մեծն Նաբոլեոն՝ ես ինքս եմ իմ նախահայրը: Այդպես էլ ես ինքս ուզում եմ լինել իմ նախահայրը»³⁶:

Չափազանց հետաքրքիր է, որ Նապոլեոնի անձը մուտք է գործել նաև Հայ բանահյուսության: Փարիզի «Ռեյու դե ռեյու» պարբերականի 1899թ. մարտի 1-ի համարում լույս է տեսել Մինաս Չերազի գրառած մի ավանդությունը Նապոլեոնի մասին, որը նա լսել է մի անգրագետ Հայ վաճառականից: Հետագայում այն հրատարակվել է Չերազի կազմած Կ.Պոլսում ապրող տարբեր ազգությունների ավանդություններն ամփոփող մի ժողովածուում³⁷: Այդ ավանդության համաձայն՝ հրկիզված Մոսկվայում

³² Հետիւր մտքեր, կազմ. Ա. Երիզար (Լոնդոն, 1902, Թիֆլիս, № 2, էջ 258 - 259):

³³ Նապոլեոն, Սուրբ Հեղինեի հիշատակարանը, թարգմանեց Ռուբեն Խաչատրյանը, Անդրադարձ, 31. X. 1991, էջ 2:

³⁴ Գլոտ Պերթե, Նաբոլեոն. կյանքն ու պատերազմները (1769 - 1821), թարգմ. Եղիա Տոլպապյան, Պեյրով, 1936:

³⁵ Տե՛ս Հենրիկ Հովհաննիսյան, Հայ թատրոնի պատմություն, XIX դար, Ե., 1996, էջ 39:

³⁶ Տե՛ս Ռուբեն Զարյան, Սիրանույշ, Ե., 1956, էջ 330:

³⁷ Սիրանույշ, Մեր քննադատները, հրատարակումը Բախչինյանի Հովակիմյանի (Գարուն, 1993, № 5 - 6, էջ 41):

³⁸ Minas Tchérax, Orient Inédit: légendes et traditions arméniens, grecques et turques, recueillies et traduites, Paris, 1912, p. 198 - 201.

Նապոլեոնը չի ընդունել, թե քաղաքն այրելով իրեն դիմադրելու թշնամու այդ տակտիկական քայլը ուղևաց ուղեղի արգասիք է և որ իբր «աղվես Հայ ծերունու մատը խառն պիտի լինի այդ գործում»³⁹: Չերադը նշել է, որ ավանդազրույցը պատմողը Բոնապարտին անվանել է «Պանապոլոտ»:

Գոյություն ունի նույն ավանդության ավելի ուշ մի գրառում: Ամերիկահայ «Լրաբեր» պարբերականը 1940թ. Ֆրանսիական «Մարիան» հանդեսի «Գիտե՞ք» սյունակից թարգմանաբար հրատարակել է մի ուշագրավ տեղեկություն՝ «Նապոլեոն Պոնափարթ Երևանի մեջ» վերտառությամբ, որն անհրաժեշտ ենք համարում ամբողջապես մեջբերել. «Մեր ընթերցողներն մին, որ Արևելքի մեջ ճամբորդութենե մը կը վերադառնա, բերած է բազմաթիվ վավերական պատմություններ, որոնք իր շրջապատին զվարճությունը կը կազմեն: Երևանի մեջ (Հայաստան) տոնավաճառի օր մը, ան լսեց պատմողի մը բերնեն նապոլեոնական դյուցազներգությունը, ըստ երկրի ավանդավեպի, որ արժանի է արձանագրվելու:

Պոնափարթ, զոր տեղացիք Բոնաբորթ կանվանեն, Ռուսաստանի վրա արշավեց 700.000 զինվորներով: Ռուսական բոլոր բանակները կը փախչեին իր առջև՝ երբ ծերունի Հայ զորավար մը խորհուրդ տվավ ցարին՝ այրել Բեթրոփոլը (Ան ֓եթերսպուրկ) և բնաջինջ ընել թշնամին ցուրտե և սովե:

Այս ծրագիրը գործադրվեցավ և Բանաբորթի բանակը, տասանորդվելով ցուրտեն և անթուլթենեն, պաշարվեցավ Հայ ծերունի զորավարի զորքերեն և գերի բռնվեցավ:

Բանակի պետը, որուն աչքերը այրվեցան ջարին հրամանով - ինչպես Միշել Սթրոկոֆը - միջնաբերդի մը մեջ բանտարկվեցավ, բայց հաջողեցավ փախչիլ՝ սպանելով բոլ մը (ոռւս քահանա), որուն սքեմը գողացավ և գնաց Անգլիա, ուր մեռավ»:

Այսպես կամփոփեն Հայերը պատմությունը «Բանաբորթը, աշխարհի մեծագույն թագավորը, որ պարտվեցավ և գերի բռնվեցավ Հայ զորավարե մը»⁴⁰:

Այս ավանդությունը կրկնել են Ժան Պիեռ Մահեն⁴¹ և Ժերար Պետրոսյանը: Վերջինիս «Քո անունն եմ գրում, Հայաստան» գրքում Նապոլեոնի այդ կարծեցյալ հայտարարությունը հնչում է այսպես. «Ես չեմ հավատում, որ ոռւս գլուղացին ունակ կլինի նման ռազմավարության: Ինձ թվում է՝ այստեղ խառն է մի ծեր, հնարամիտ Հայի մատը»⁴²:

Ո՞րն է այս ավանդության հիմքը: Հայտնի է, որ ոռւս-ֆրանսիական պատերազմի ժամանակ Հայերը մասնակցել են ոռւսական բանակի գործողություններին՝ տալով մի շարք հեղինակություններ: Հնարամիտ Հայի նախատիպը կարող էր լինել ոռւսական բանակի կազմում հանդես եկող ցանկացած հայազգի բարձրաստիճան զինվորական: Սակայն կարծում ենք, որ այս ավանդությունը կարող էր և ստեղծված լինել առանց որևէ լուրջ հիմքի, ժողովրդի լայն շրջաններում՝ նրա սնապարծությունը շոյելու համար:

³⁹ Նույն տեղում, էջ 199:

⁴⁰ Նապոլեոն Պոնափարթ Երևանի մեջ (Լրաբեր, Նյու Յորք, 10.II. 1940):

⁴¹ Jean-Pierre Mahé, Arménie, "Dictionnaire Napoléon", sur la direction de Jean Tulard, Paris, 1987, p. 123.

⁴² Gérard Bedrossian, Nicole Priollaud, Arménie, j'écris ton nomme, Paris, 1990, p. 101.

Ավելորդ է ասել, որ մեջբերված երկրորդ ավանդության մեջ Մոսկվան փոխարինվել է Պետերբուրգով, ինչն ակնհայտ թյուրիմացություն է:

Նապոլեոնի անունն այլևայլ առիթներով կրկնվում է Հայ գրողների ամենատարբեր երկերում, որոնք Ֆրանսիայի կայսեր անունը հիշատակում են՝ համեմատության մեջ դնելով նրա մի շարք էանիշերը: Ամենից ավելի Բոնապարտը հիշվում է իր փառքով ու գործությամբ: Այսպես, Նաիրի Զարյանի «Ստալին» բանաստեղծությունը սկսվում է հետևյալ տողերով.

Աքիլեյսին Հոմերն երգեց, Ռոստոմ-Ջալին՝ Ֆիրդուսին,
Ոսկեզօծվեց հզոր երգով Նապոլեոնի փառքը սին...⁴³

Խորհրդահայ բանաստեղծն այլ կերպ չէր կարող որակել Նապոլեոնի փառքը, մանավանդ որ այն համեմատվում էր «ժողովուրդների մեծ հոր» փառքի հետ...

Հայ գրողները հիշատակել են նաև Նապոլեոնի կարճ հասակը: Երվանդ Օտյանն իր «Հեղափոխության մակարդյունները» շարքի «Խմբագիրը» պատմվածքի հերոս կարճահասակ Զաքոսին մխիթարելով ասում է, որ «Հուլիոս Կեսար, Նաբոլեոն առաջին, պարոն Թիեռ, ասոնք ալ կարճահասակ էին»⁴⁴: Վահրամ Փափազյանը, գրելով Սահակ Տեր-Գաբրիելյանի մասին, նշել է, որ վերջինս «Իր կարճ հասակով ու լայն ճակատով շատ նման էր կորսիկացի հանճարեղ գորավարին, որի գործունեության հանդեպ ակնածանք եմ ունեցել միշտ և ունեմ»⁴⁵: Կոստան Զարյանի «Բանկոպը և մամուլի ոսկորները» վեպի հերոս Զարչարյանը մտորում է Նապոլեոնի չրմի առաջ. «Համա գերեզման ա հա՛... մեծ մարդ էր»: Նա սկզբնապես կարծել է, թե Նապոլեոնը բարձրահասակ է եղել, սակայն իմանալով, որ իրականում հակառակն է՝ ասում է. «Ձեռ կարող երևակայել՝ ինչքա՛ն ուրախ եմ: Հիմա կարող եմ ասել՝ Նապոլեոնն էլ ինձ չափ պզտիկ ըոյ ուներ»⁴⁶: Նապոլեոնի անձը շարունակվում է Զարչարյանի մյուս մտքերում ևս. «Էսօր, եթե Նապոլեոնը գա իսկ, ոչինչ չի կարող անել, կամ շատ շատ կուսակցության առաջնորդներից մեկը կը լինի», «Էսօր, եթե Մոսկվայում մի Նապոլեոն ծնվի, կը գնդակահարենք», «Էս Նապոլեոն ասված մարգի հե՛րն էլ անիծեմ: ...Եթե իմանան, թե նրա մասին լավ եմ խոսել, կարող են մտածել որ Տերմիդոր եմ ուզում, ինչպես շատերը: Իսկ եթե Տերմիդոր եմ ուզում, ուրեմն կուսակցական գծից չեղել եմ, ուրեմն Եվրոպայի բուրժուական միջնորդորդ վրաս ազդել ա»⁴⁷: Զարչարյանի այս խոսքերն առանձնակի արժեք թերևս չէին ունենա, եթե հաշվի չառնենք, որ Կոստան Զարյանը նրա կերպարով ներկայացրել է Եղիշե Չարենցին⁴⁸: 1928-ին Փարիզում նրան հանդիպած Չարենցը կարող էր նման մտքեր հայտնել իր գրչնկերովը:

Հիտլեր-Նապոլեոն նմանությունը նույնպես տեղ է գտել Հայ գրականության մեջ: Այս թեման վաղուց է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը (անգլիացի հեղինակ Դեսմոնդ Սյուլարդը գրել և 1988-ին

⁴³ Խորհրդային Հայաստան, 29. XI.1935:

⁴⁴ Երվանդ Օտյան, Ընտիր երկեր, Ե., 1988, էջ 18:

⁴⁵ Վահրամ Փափազյան, Հետադարձ Հայացք, Ե., 1981, էջ 367:

⁴⁶ Կոստան Զարյան, Բանկոպը և մամուլի ոսկորները, Անթիլիաս, 1987, էջ 541:

⁴⁷ Նույն տեղում, էջ 542 - 543:

⁴⁸ Այս մասին տե՛ս Վարդան Մատթեոսյան, Կոստան Զարյանի շուրջ, Անթիլիաս, 1999, էջ 243 - 252:

հրատարակել է «Նապոլեոն և Հիտլեր» համեմատական կենսագրությունը⁴⁹։ Երբ նոր էր սկսվել Երկրորդ աշխարհամարտը, Նյու Յորքի «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթում տպագրվել է Ն.Արմենի «Հիթլեր և Նաբոլեոն» հոդվածը⁵⁰։ Նաիրի Զարյանը պատերազմի օրերին գրած երկու բանաստեղծության մեջ հիշել է Բոնապարտի անունը, կապված Նապոլեոնին ընդօրինակելու հիտլերյան մարմաջի հետ։ «Նա պիտի կախվի» բանաստեղծության մեջ, խոսելով Հիտլերի մասին, ասվում են հետևյալ խոսքերը.

Սա չէ Ալեքսանդր ու ոչ էլ թեկուզ մի գոռ Բոնապարտ,
Որին չը ժպտաց Առևտեռլիցի արևը կրկին,
Եվ գուր է փորձում ընդունել նրանց կեցվածքը հըպարտ
Այդ հտպիտ հոգին⁵¹։

«Հիտլերը զոռավարկում» բանաստեղծության մեջ, որտեղ կենդանիները որոշում են, թե ում վանդակում պիտի տեղավորեն Հիտլերին, վագրն ասում է.

Տվեք, թող ապրի կապկի վանդակում,
Նա Նապոլեոնին հանախ է կապկում⁵²։

Նապոլեոնի ասույթները ևս ժամանակ առ ժամանակ գործածվել են Հայ գրականության մեջ. Ղևոնդ Մելոյանի «Վասպուրականի հերոսամարտը» թատերգության (Փարիզ, 1940) բնաբանը Նապոլեոնի խոսքերն են՝ «Երբ ժողովուրդը ոտքի է կանգնել՝ նրան այլևս անհնար է կանգնեցնել»։ Վաղամեռիկ բանաստեղծ Դավիթ Հովսեփյանի «Աստղեր և անդունդ» քերթվածի բնաբանը ևս Նապոլեոնի ասույթներից մեկն է՝ «Աստղերից անդունդ մի քայլ է»⁵³ և այլն։

Այսպիսով, Նապոլեոնի անունը Հայ գեղարվեստական գրականություն մուտք է գործել տակավին նրա կենդանության օրոք՝ 1804թ. (Պետրոս Յուսկյուտարյան) և հետագայում դիպվածաբար տեղ գտել այլ հեղինակների գործերում, մինչև անգամ բանահյուսության մեջ։ Նապոլեոնյան իրադարձությունները տակավին XVIII դ. վերջին հիշվում են Հայ մեմուարային գրականության մեջ, իսկ ավելի ուշ՝ դրանց մասին տեղեկություններ են տրվում մամուլում։ Նապոլեոնի գործերից Հայերեն թարգմանվել են նրա մահից առնվազն չորս տարի անց՝ 1825-ից հետո, իսկ Հայ գրողներն ամենատարբեր առիթներով հիշել են Նապոլեոնի անունը՝ նրա մասին գրելով հոգևածներ, բանաստեղծություններ, օգտագործել նրա ասույթները։

⁴⁹ Ռուսերեն թարգմանությունը տպագրվել է Սմոլենսկում, 1995-ին։

⁵⁰ Ն.Արմեն, Հիթլեր և Նաբոլեոն (Հայաստանի կոչնակ, Նյու Յորք, 1940, էջ 829 - 831)։

⁵¹ Նաիրի Զարյան, Վրեժ, Ե., 1942, էջ 10։

⁵² Նույն տեղում, էջ 22։

⁵³ Դավիթ Հովսեփյան, Եթե արցունքը խոսել գիտենար, Ե., 1991, էջ 53։

НАПОЛЕОН БОНАПАРТ В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

А. Г. БАХЧИНЯН

Резюме

Имя Наполеона Бонапарта уже при его жизни фигурировало в армянской литературе – летописях, мемуарных произведениях, художественной литературе и даже в фольклоре. В 1804г. Петрос Юскютарлян посвятил ему четверостишие. К выдающемуся историческому деятелю обращались также армянские авторы XIX – XX вв. (С. Дюсаб, Д. Демирчян и др.). Ему посвящены отдельные статьи и исследования О. Исаряна, А. Вартаняна.

События наполеоновской эпохи нашли отражение в армянской мемуарной литературе уже в конце XVIII века (“Летопись” Тер Арутюна). О них неоднократно писала армянская пресса (газета “Дитак Бюзандян”). Почти все современники-армяне отзывались о нем как о деспоте.

Некоторые из сочинений самого Наполеона впервые на армянский язык были переведены через четыре года после его смерти – в 1825г. Начиная с XIX в. на армянский язык были переведены ряд статей и художественных произведений о Наполеоне Бонапарте.